# ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

## Ի ԳԻՇԵՐԻ

Միայն մէ՛կ պահ, մէ՛կ խորհուրդ: Չքնաղ անցեալ, ապագայ.
Կը չքին եւ չափ մէկ կողմէ, եւ միւս կողմէ՝ քանութան:
Ըսպառողին՝ ամէն տեղ Օրէնքի սուրը կուգայ
Կտրել կապերը մտքի եւ բանալ անցքը լուսոյ . . . .

Պէտք է սորվիլ եւ մոռնալ: Կեանքի կռիւը՝ սրտի
Վէրքին վրայ՝ պէտք է միշտ եղունգներով փրցնել:
Պէտք է մրրուր ըլլալ օրն եւ հուրհան սակ նոտի.
Ճանանչ՝ խիղճը մութին պատերուն մէջ նողմարգել . . . .

Գիշերն է որ կը խայծէ—ճամբաներէն լքուածն,
Փայտուզիին մէջ ֆուերի եւ երազի յուսանցին
Ծակերուն սուղ—ծոգինե՛րն եւ Աստուծոյ դէմ կուգան . . . .

Սկզբնական է գիշերն եւ թերմնաւոր յաւիտեան.
Միայն խուէ կը ծրէնի սրեւներ մեծ ու պզտիկ.
Չայն իրրեւ սարր ըստեղծման բաղուց ձեզ Տէրն, ո՛վ մարդիկ . . . .

ԳԱՀԻՐԷ
ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ

## ԱՂՕԹԵՐԳ

Յաւերժական մագաղաթի վրայ տրտում
Այս երգին բառն, աղօ՛թք անմուն Աստուծոյ,
Երկ հոգւոյս նրագին յոյսով կարդացի,
Գաղտնիքին վարդը շրթներուս տուիր Դուն:

Թախանձանքն էր ափսոսանքի մը տժգոյն
Ցոլքի երկրին՝ Արեւին զոր սիրեցի,
Երբ մերկութիւնն աղբիւր մը չէր քախիծի
Ու՛ր խռնուած եմ այնքա՛ն խոնջ եւ նիհուն:

Եւ խունկին բոյրը մատներուս տուիր Դուն,
Որոնք եղան շուշանաբոյր, եւ այնքա՛ն
Հրաշեղ՝ որ սիրտս ճաղեցին դիւթական

Ծարիկի պէս՝ ինձ խօսեցի՛ց անպատում,
Ու կրկնելով եւ մաղթա՛յ, ո՛ւր հիւանդ
Այս երգին բառն, աղօ՛թք անմուն Աստուծոյ . . . .

ԳԱՀԻՐԷ
ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹ Ծ.

digitised by A.R.A.R.@